

3962

281.6

U-33

1893

53

4-35

ՎԱՐՁԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՄԱՏՐԱՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԲԱՐԻՉՈՒ



2001

281.6
5-33

1893



2010

այլ. 47

281.6

4-33

370

2041-44

ՎԱՐՁԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՄԱՏՐԱՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԲԱՐԻՉՈՒ



1004
68251
4001



1893

11550



ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԵՐԿՍՐ տարիներէ հետէ, զրկեալ Մատուռէ եւ կը-
ղերէ, եւ հետեւաբար կրօնի կանոնաւոր կիրառութենէ,
ցրուեալ այսպէս մի օտար երկրի մէջ, անկապ ու անջատ
իրարմէ մեծ մասամբ, եւ խառնուած օտար տարրերու,
ոչ միայն ամեն Հայ անհատ վտանգուած էր կորսուելու
իւր Ազգէն, աւելի կամ նուազ հեռաւոր ապագայի մը
մէջ, այլ այժմէն իսկ սկսած էր մոռանալ իւր ուրոյն ազ-
գայնութեան զգացումն ու իմացականութիւնը:

Եւ արդարեւ, դարերէ ի վեր, օտար տէրութեանց իշ-
խանութեանց ներքեւ, Հայն իւր Եկեղեցւով կարողացած
է պահպանել իւր ազգութիւնն ու կրօնքը. եւ դարձեալ
ակներեւ է թէ եկեղեցին եւ հաւատք զօրավիգն պիտի
ըլլան պահպանելու անոր կեանքը ապագային մէջ:

Արդ անհուն գոհունակութեամբ կը տեսնենք թէ այս
ամենամեծ թերին լցուած է վերջապէս մայրաքաղաքիս
մէջ մի Հայկական Մատրան հաստատութեամբ, որոյ պայ-
ծառութեան եւ յարատեւութեան համար իւրաքանչիւր
Հայ անհատ, իբր նուիրական պարտականութիւն, պար-
տի ընծայել զիւր աջակցութիւն անձնուիրաբար:

Մատրան պիտոյից հոգատարութիւնն ստանձնող ներ-
կայ Հոգաբարձութիւնս, ինչպէս նաեւ մայրաքաղաքիս
գաղթականութիւնը վերահասու լինելով թէ՛ հակառակ
ամեն աշխատութեանց եւ բարի կամեցողութեան, ան-
պատեհութիւններ անպակաս պիտի մնային միշտ՝ եւ կա-

տարեալ կանոնաւորութիւնն ու պարտահանաչումիւն աւնետն կողմանէ՝ գոնէ ղժուարին պիտի լինէին ի վնաս Մատրան եւ ժողովրդեան, ցորչափ Հոգաբարձուաց, Հովուին եւ Գաղթականութեան փոխադարձ իրաւունքն ու պարտականութիւններն որոշակի հշդուած չըլլային մասնաւոր կանոնագրութեամբ, որոշեցին ընդհանուր ժողով մը կազմել՝ ուր Հոգաբարձութիւնս բացատրելով կանոնագրութիւն մը խմբագրելու անհրաժեշտ պէտքն ու կարեւորութիւնը, առաջարկեց ընտրել տասն եւ հինգ հոգիներէ բաղկացեալ ֆանձնախումբ մը, միակ պաշտօն տալով նմա խմբագրել պարտ ու պատշաճ օրէնքներն: Ընդհանուր ժողովն ընդունեց Հոգաբարձութեան այդ առաջարկն եւ անուանեց օրէնսդիր մարմին մը՝ իւր 1892 Հոկտեմբեր 30 ի նստին մէջ:

Կանոնագրութեան ֆանձնաժողովն ներկայացնելով այժմ իւր աշխատութեանց արդիւնքը, յաւակնութիւն չունի երբէք անիմերի գործ մը կատարած լինելու. սակայն ապահով է թէ՛ յաջորդաբար բերուելիք սրբագրութիւնը ու բարեփոխութիւնը պիտի կարենան նմա տալ ապագային՝ աւելի կատարեալ ձեւ մը, որ համապատասխանէ լիովին ամեն օրինաւոր պահանջից:

Բարից 16 Փոքնոշար 1893.

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

Մ Ա Տ Ր Ա Ն Հ Ա Յ Ո Յ Բ Ա Ր Ի Զ Ո Ւ

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Հ Ո Վ Ի Ի

Յօդ. 1^o. — Հովիւն մի միայն իրաւասութիւն ունի ի մասին կրօնական և ծիսական խնդրոց պարտ ու պատշաճն տնօրինելու և զայն գործադրելու. այս պարագային մէջ ինքն միայն պատասխանատու է այն կրօնական Գերիշխան Պետին՝ յորմէ կարգեալ է:

Յօդ. 2^o. — Հովիւը պարտաւոր է քուէարկութեան միջոցին ներկայ գտնուել Ընտրողական ժողովոյ, ինչպէս նաև Օժանդակ ֆանձնաժողովոյ նիստերուն. սոյն կրկին ժողովներու մէջ ևս մէկ քուէի միայն իրաւունք ունենալով:

Յօդ. 3^o. — Հովուի ընտրութիւնը տեղի կ'ունենայ հետեւեալ եղանակաւ:

Հոգաբարձութիւնը կը ներկայացընէ մի քանի ընտրելի եկեղեցականաց անունները Օժանդակ ֆանձնաժողովոյն, որոնց մէջէն միասին կ'ընտրեն մին, ըստ 12րդ Յօդուածին, և վաւերացնել կը տան զայն Սեպհական թեմին:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդ. 4⁰. — Հոգաբարձութեան պարտաւորութիւնն է՝ անձնուիրաբար եկեղեցւոյն բարգաւաճման և պայծառութեանն համար կարելի եղած ջանքերը չի խնայելով՝ զայն պարժանաց արժանի հանդիսացնել, հետեւեալ պայմանները գործադրելով:

Ա. Ազգայիններէն տարեկան տուրք և նուէր հաւաքել:

Բ. Որ և իցէ պատճառի համար պնակի շրջաբերութիւնն արգելել եկեղեցւոյ մէջ:

Գ. Եթէ Հոգաբարձութիւնը յարմար գատէ, կարող է մասնաւոր գանձանակներ հաստատել եկեղեցւոյ մէջ կամաւոր նուէրներ հաւաքելու համար, առ ի պիտոյս եկեղեցւոյ և Հայ կարօտելոց:

Դ. Ունենալ մի տումար՝ որոյ մէջ արձանագրուին Ծննդեան, Ամուսնութեան և Մահուան թուականք, համակերպելով տեղական կառավարութեան օրինաց:

Ե. Ներկայացնել ամեն տարի որոշեալ ժամանակին իւր հասութից և ծախուց հաշիւներն Օժանդակ Յանձնաժողովոյ:

Զ. Ունենալ յատուկ տումար մի ժողովոց ատենադրութեանց համար:

Յօդ. 5⁰. — Հոգաբարձութիւնը վերին հսկու-

ղութեան իրաւունք ունի եկեղեցւոյ ներքին բարեկարգութեան և պաշտօնէից պարտաճանաչութեան վրայ:

Յօդ. 6¹. — Հոգաբարձութիւնը կը բաղկանայ հինգ անդամներէ և իւր պաշտօնին տեսողութիւնն է երեք տարի:

Յօդ. 7⁰. — Հոգաբարձութիւնը իւր մէջէն կ'ընտրէ մի Ատենապետ, մի Ատենադպիր և մի Գանձապետ, և մէկ անդամի ևս պաշտօն կը տայ մասնաւորապէս զբաղելու աղքատաց և ամեն կարգի կարօտելոց խնդիրներով, և անոնց յատկացեալ դրամական հասութից և նուէրներու գործաժութեամբ:

Յօդ. 8⁰. — Հոգաբարձութեան որոշումները գործադրելի են միշտ երեք անդամոց հաւանութեամբ. նոյն իսկ եթէ Հոգաբարձուաց թիւը երեքի իջած ըլլայ:

Յօդ. 9⁰. — Եթէ Հոգաբարձութեան անդամոց մին կամ աւելին հրաժարին, Օժանդակ Յանձնաժողովը քուէարկութեամբ կ'ընտրէ նոր անձեր՝ վերոյիշեալ հինգ թիւն ամբողջացնելու համար. որպէս զի Հոգաբարձուաց թիւը միշտ իւր ամբողջութիւնը պահէ: այս ընտրեալ անձինք առ ժամանակեայ կերպիւ կը վարեն Հոգաբարձութեան պաշտօնը՝ մինչև յառաջիկայ Ընդհանուր Քուէարկութեան օրն:

Յօդ. 10⁰. — Եթէ Հոգաբարձութեան մեծամասնութիւնը հրաժարի, Հոգաբարձութիւնը լու-

ծեալ կը համարուի. այս պարագային մէջ ընտրութիւնն ամբողջութեան համար կը կատարուի:

Յօդ. 11⁰. — Եթէ Հոգաբարձութիւնը հարկ դատէ ամենակարեւոր խնդրոյ մը համար Օժանդակ Յանձնաժողովոյ աջակցութիւնը խնդրել, կրնայ զայն ինչպէս նաև Հովիւն՝ ի միասին խորհրդակցութիւն հրաւիրել: արուած որոշումները վաւերական համարուելու համար այս երկու ժողովոյն՝ առ նուազն երկու երրորդ մասին հաւանութիւնն անհրաժեշտ է:

Յօդ. 12⁰. — Եթէ Հոգաբարձութիւնը հարկ համարի Հովուի ընտրութեան կամ հրաժարման մասին որոշում մը տալ, պարտի Օժանդակ Յանձնաժողովը ի նիստ գումարել և ըստ 11րդ Յօդուածին գործել:

Յօդ. 13⁰. — Հոգաբարձուք վերընտրելի են իրենց պաշտօնին մէջ. սակայն չեն կարող միևնոյն ժամանակ Օժանդակ Յանձնաժողովոյ ալ անդամ լինել:

ՕՃԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Յօդ. 14⁰. — Օժանդակ Յանձնաժողովը կը բաղկանայ 14 անդամներէ, 4 տարուան պաշտօնով. ասոնցմէ կէսը նախ եւ յառաջ երկու տարիէն պէտք է վիճակաւ փոխուին. այնուհետև երկու տարին մի անգամ մնացեալ կէսը հրաժարելով

պիտի ընտրուին վերստին: Եթէ չորս տարին չի լրացած՝ անդամ մը հրաժարի, նոր ընտրեալ անձը հրաժարելոյն մնացորդ ժամանակը միայն պիտի լրացնէ:

Յօդ. 15⁰. — Օժանդակ Յանձնաժողովոյ Դիւանը կը կազմուի չորս անձերէ, մի Ատենապետէ, մի փոխ — Ատենապետէ, մի Ատենադպրէ և մի փոխ — Ատենադպրէ:

Յօդ. 16⁰. — Օժանդակ Յանձնաժողովոյ պաշտօնն է.

Ա. Ամեն տարի Յունուար ամսոյ մէջ Հոգաբարձութենէն պահանջել իւր տարեկան ընդհանուր հաշիւը:

Բ. Այլ և այլ պատճառներով եթէ Հոգաբարձուաց թիւը պակսի, լրացնել նոցա թիւը իւր անդամներէն, ըստ 17րդ Յօդուածի:

Գ. Եթէ Հոգաբարձութիւնը հարկ համարի կարեւոր խնդրոց վրայ խորհրդակցելու՝ աջակցի իրեն:

Յօդ. 17⁰. — Օժանդակ Յանձնաժողովը կրնայ ի ժողով գումարիլ, երբ գոնէ իւր անդամոց երկու երրորդ մասը ներկայ գտնուին. նոյնպէս որոշմունք օրինաւոր կը համարուին, երբ ներկայ ժողովականաց երկու երրորդ մասին հաւանութեամբն ըլլան:

Յօդ. 18⁰. — Օժանդակ Յանձնաժողովը պարտի ունենալ մասնաւոր տուժար մը Ատենադրութեանց համար:

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 19⁰. — Հայ Գաղթականութեան ամեն անգամ ընտրող և ընտրելի է.

Ա. Եթէ կը մասնակցի տարեկան սուրբի մը՝ որ առ նուազն 25 ֆրանք է:

Բ. Եթէ լրացուցած է 21 տարին:

Գ. Եթէ հաստատուած է ի Բարիդ կամ ի շրջակայս:

Դ. Եթէ քրէական յանցանք որ և է դատապարտութիւն կրած չէ:

Յօդ. 20⁰. — Գաղթականութեան ամեն անգամ իրաւունք ունի գրաւորապէս ներկայացնել Հոգաբարձութեան որ և է առաջարկութիւն կամ դիտողութիւն:

Յօդ. 21⁰. — Գաղթականութեան իրաւունքն է ընտրել Հոգաբարձութեան և Օժանդակ Յանձնաժողովոյ անդամները:

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿ

Յօդ. 22⁰. Ընդհանուր քուէարկութիւնք տեղի կ'ունենան Եկեղեցւոյ մէջ, հրաւիրանք Հոգաբարձութեան, և ընդ հսկողութեամբ ընտրողական ժողովոյ մը՝ որ կը բաղկանայ Հովուէն, ամբողջ Հոգաբարձութենէն և Օժանդակ Յանձնա-

ժողովոյ Ատենապետէն և Ատենադպրէն: Եթէ այս անձերէն մին կամ աւելին որ և է պատճառաւ բացակայ գտնուին, հարկ է պակաս թիւը լրացնել Օժանդակ Յանձնաժողովոյ անդամներէն:

Յօդ. 23⁰. — Քուէարկութիւնք տեղի կ'ունենան Մայիս ամսոյ մէջ. սակայն միւս ամսոց մէջ ևս բացառիկ պարագայից բերմամբ կրնան տեղի ունենալ. ի բաց առեալ Յուլիս, Օգոստոս և Սեպտեմբեր ամիսները:

Յօդ. 24⁰. — Քուէարկութեան իրաւունք ունեցողք՝ ըստ 19րդ Յօդուածի, պարտին անձամբ ներկայացնել իրենց քուէն որոշեալ ժամուն, և ստորագրել միանգամայն ընտրողաց ցանկին մէջ իրենց անուան առջև, ի ձեռին ունենալով իրենց ուղղեալ հրաւիրագիրն, որոյ մէջ ժողովրդեան դիւրութիւն տալու համար ընտրելեաց ցանկ մը պիտի գտնուի. սակայն ընտրողք պարտաւոր չեն ընտրելեաց ցանկին հետեւելու:

Յօդ. 25⁰. — Եթէ որ և է պատճառաւ ընտրողք չկրնան ներկայ գտնուիլ, կրնան ստորագրեալ նամակաւ մի Հոգաբարձութեան ուղղել իւրեանց քուէներն:

Յօդ. 26⁰. — Որոշեալ ժամէն վերջ՝ յետամնացք բողոքելու իրաւունք չունին բնաւ:

Յօդ. 27⁰. — Քուէհամարը տեղի կ'ունենայ հրապարակաւ, Քուէտուփին զոցուելէն անմիջապէս վերջը:

Յօդ. 28⁰. — Քուէհամարէն առաջ եթէ Հոգաբարձութիւնն որ և է անկանոնութեան կասկած մ'ունենայ, ութ օր վերջը դարձեալ քուէարկութեան կը ձեռնարկէ:

Յօդ. 29⁰. — Քուէարկութիւնն օրինաւոր կը համարուի երբ զրկուած քուէթղթոց գումարին գոնէ մէկ երրորդ մասը քուէի մասնակցի, եթէ առաջին անգամով այս համեմատութիւնը չստացուի, ութ օրէն վերստին քուէարկութիւն տեղի կ'ունենայ, և այն ատեն տրուած քուէից որ և է քանակութիւնն օրինաւոր կը համարուի:

Յօդ. 30⁰. — Եթէ ընտրեալ անդամներէն մին կամ աւելին հրաժարին, վերստին քուէարկութեան կը ձեռնարկուի, պակասած անգամոց թիւը լրացնելու համար:

Յօդ. 31⁰. — Եթէ պատահի որ մէկն իւր Քուէթղթոյն մէջ պէտք եղածէն աւելի թուով անուն գրած ըլլայ, այն Քուէթուղթն անվաւեր կը համարուի:

Յօդ. 32⁰. — Քուէարկուաց թուոյն կէսէն աւելի քուէ ստացողներու մէջէն առաւելագոյն քուէ ստացող անձինք ընտրուած են. իսկ եթէ առաջին քուէարկութեամբ պահանջելի թիւը չ'ստացուի, վերստին քուէարկութեան կը ձեռնարկուի յաջորդ շաբթուն, պակասեալներուն թիւն ամբողջացնելու համար. բայց այս անգամ աւելի թիւ ունեցողն ընտրեալ կը համարուի:

Յօդ. 33⁰. — Եթէ ընտրեալք հաւասար քուէ

ներ ունենան՝ համեմատականի կը մնան, այսինքն, հաւասար քուէից թիւ ունեցողներուն համար յաջորդ շաբթուն վերստին քուէարկութիւն կ'ըլլայ ըստ 32րդ Յօդուածի:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ, ՊՍԱԿ ԵՒ ԹԱՂՈՒՄ

Սյս արարողութիւնք տեղի կ'ունենան Հովուին և Հոգաբարձութեան գիտակցութեամբ:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Ծնողք իրենց զաւկին Մկրտութենէն առաջ, պարտին Մեռիէն տրուած (Bulletin de Naissance) ծննդեան վկայագիրը ներկայացնել, և մանկան մկրտութենէն վերջ կը ստանան ծննդեան և մկրտութեան թուականները պարունակող վկայագիր մը, որ կը կրէ Հովուին և Հոգաբարձութեան ստորագրութիւնները: Սոյն վկայականին պատճէնը յատուկ տումարի մը մէջ արձանագրեալ կը մնայ Հոգաբարձութեան քով:



Պ Ս Ա Ն

Ամեն անձինք որ կ'ուզեն ամուսնանալ, պարտին Հովուին և Հոգաբարձութեան ներկայացնել Մեռիին արտօնագիրն, ինչպէս նաև իրենց պատկանած երկրին կառավարութեան օրինաց համաձայն ամուսնութեան համար հարկ եղած վաւերական թուղթերն:

Հովիւ և Հոգաբարձութիւն համաձայնութեամբ կը տան ամուսնութեան վկայական մը:

Թ Ա Ղ Ո Ւ Մ

Ննջեցեալ ազգայնոց թաղման համար անհրաժեշտ է Գաղղիական կառավարութեան գիմելով թաղման արտօնութիւնն ստանալ և հաղորդել զայն Հովուին ու Հոգաբարձութեան, որպէս զի թաղման հանդէսը եկեղեցական արարողութեամբ կատարուին:

Վերոյիշեալ երեք պարագայից մէջ, Հոգաբարձութիւնն ըստ կարողութեան անհատից հարկ դատած իրաւունքները պիտի առնու, որոց կէսն եկեղեցւոյ և միւս կէսն Հովուին պիտի յատկացուին. իսկ որ և իցէ նուիրատուութիւնք միայն եկեղեցւոյ կը պատկանին:

Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Յօդ. 340. — Հոգաբարձութիւնը եթէ երբէք հարկ համարի որ և իցէ փոփոխութեան ենթարկել ներկայ կանոնադրութիւնս, կարող է վերաքննել զայն խորհրդակցութեամբ Օժանդակ Յանձնաժողովոյ, և սոյն երկու ժողովոց անգամներուն առ նուազն երկու երրորդին հաւանութեամբ:



3502

« Ազգային գրադարան



NL0030812

58410